<<ԱԶԱՏԱՆԻ ԲԱ>> ՊՈԱԿ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ընդհանուր տեղեկություններ <<Ազատանի ԲԱ>> ՊՈԱԿ-ի վերաբերյալ
Անվանումը-<<Ազատանի ԲԱ>> ՊՈԱԿ
Հասցե,հեռախոս-ՀՀ Շիրակի մարզ,գյուղ Ազատան,1.փ,90շ
Հեռ-093-409-900
Լիցենզիա –Անժամկետ,տրված 03.10.2006թ

Լաբորատորիան իրականացնում է բնակչության <<Առողջության առաջնային պահպանման >> ծրագիր:
Բժշկական օգնության և սպասարկման տեսակներն են՝

1.Ընտանեկան բժշկություն (մեծահասակ և մանկական)
2.Բժշկական ընդհանուր (տեղամասային թերապևտի,տեղամասային մանկաբուժի) պրակտիկա
3.Ֆունկցիոնալ սխտորոշում ՋՃ մոնիտորինգ ,ԷՍԳ,արյան մեջ գլյուկոզայի որոշում ,մեզի անալիզ
4.նեղ մասնագիտացված դիսպանսեր հսկողություն (հակատուբերկուլոզային ,ինֆեկցիոն ,էնդոկրին)
5.Մանկաբարձական ընդհանուր պրակտիկա:
Մնացած հետազոտությունները պայմանագրային հիմունքներով իրականացվում են <<Ախուրյանի ԲԿ>>-ում:
Կնքված են պայմանագրեր << Ախուրյանի ՄՄԱԿ>>-ի,<<Ավստրիական ՄՄԿ –ի ծննդատան հետ:
Աշխատում է միայն պետ պատվերի սկզբունքով,վճարովի ծառայություններ չի իրականացնում:

Սպասարկվող բնակչությունը
Ամբուլատորիան սպասարկում է Ազատան և Բենիամին համայնքների թվով 5835 ազգաբնակչություն,որից ՝
0-18տ-1419
18տ-ից բարձր-4416:
Ամբուլատորիան ունի 15 աշխատող ,այդ թվում
Թերապևտ-1
Մանկաբույժ -1
Ընտ.բժիշկ-1
Բուժքույրեր -9՝ որից մեկ բուժքույր Բենիամինի ԲՄԿ-ում

Շենքային պայմանները

Ամբուլատորիան տեղակայված է մեկ հարկանի քարե շենքում ,որն ունի վերանորոգման կարիք: Շենքը կառուցվել է 1956թ որպես կենցաղի տուն:1986թ վերանորոգվել և հարմարեցվել է որպես ամբուլատորիա:
Ամբուլատորիայի շենքի մակերեսը 260քմ է :
Ջեռուցումն իրականացվում է գազի վառարաններով:

Զարգացման ռազմավարական ծրագիր

1.Շենքային պայմանների բարելավում,նոր գույքի ձեռքբերում-դիմել բարեգործական հիմնադրամներին,բարերարներին շենքի վերանորոգման ,ավելի ժամամանակակից ջեռուցման ,նոր գույքի ձեռք բերման անհրաժեշտ ֆինանսական հատկացումների համար(2016 -2018թթ):

2.Պարտքերի մարում-ֆինանսական միջոցների խնայողությունների ,հաստիքների օպտիմալացման միջոցով պարտքերի մարում(2016 -2018թթ):

3.Մարդկային ներուժի զարգացում ,բուժ անձնակազմի պարբերական վերապատրաստումներ:
ա . տեղամասային մանկաբուժի և տեղամասային թերապևտի վերամասնագի տացում որպես ընտանեկան բժիշկ(2016 -2018թթ):
բ. բժիշկների վերապատրաստում –ՇՄԶ ծրագրին համապատասխան մշտապես ապահովել ընտ.բժիշկի, թերապևտի ,մանկաբույժի վերապատրաստման գործընթացը հանրապետությունում կազմակերպվող տարբեր ուսոցողական դասընթացներին,վերապատրաստումներին և գիտաժողովներին պարբերաբար մասնակցության միջոցով:
գ. տեղամասային (ԲՄԿ) բուժքույրերի և ընտ.բուժքույրերի վերապատրաստում –մշտապես ապահովել շարունակական վերապատրաստումները՝ հմտությունները և մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով:

4.Բուժ սարքավորումների և բուժ գործիքների հագեցվածության ապահովում –ձեռք բերել կենտրոնացված կարգով՝ համաձայնեցնելով հիմնադիրի և Առոջապահության նախարարության հետ(ԷՍԳ նոր սարքավորման,խոլեստերինի որոշման սարքավորման ձեռքբերում) (2016 -2018թթ):

5.Մատենավարման(քարտային) բաժնի ստեղծում,նոր ամբուլատոր քարտերի ներդրում-մշտապես թարմացնել ամբուլատոր քարտերը,ներդնել նոր քարտեր ամբուլատորիայի ֆինանսական միջոցների հաշվին (2016թ):

6.Առաջին օգնության ,միջամտությունների և վիրակապության կաբինետի ստեղծում(2016թ):

7.Կառավարման համակարգի բարելավում(2016-2018թթ):

ա. Առկա համակարգչային տեխնիկայի արդյունավետ օգտագործում
բ. Մատենավարման բաժնում համակարգչի ներդրում (2016թ):
գ. ինտերնետային կապի անխափան ապահովում-համգործակցել DELTA տելեկոմի համապատասխան մասնագետների հետ պայմանագրային հիմունքներով (2016թ):
դ. այլ բուժհաստատությունների հետ կապի ապահովում- մարզի այլ բուժհաստատությունների վարչական և բուժական գծով մասնագետների հետ համագործակցության նպատակով /կոնսուլտացիաներ,պայմանագրերի կնքում,էպիկրիզների փոխանցում և այլն/:

8.ՈԲԽ-ի ստեղծում - մատուցվող բուժօգնության որակը վերահսկելու և բարելավելու նպատակով(2016թ):

9.Մարզի առաջատար մասնագետների մասնակցությամբ բաց դռների պարբերաբար կազմակերպում:

10.Տրանսպորտային միջոցի ձեռքբերում-տնային կանչերը պատվաստոմային գործընթացը և այլ բժշկական միջոցառումները ավելի որակյալ և ժամանակին կատարելու համար(2019թ):

15.07.2016թ

Ազատան ԲԱ ՊՈԱԿ

նօրեն՝ Ա.Հարությունյան